ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հունիսի 2022 թվականի №-Ա
ք. Երևան

«ՀՐԱԶԴԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶՋԷԿ)» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացրած՝ «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 2021 թվականի 2-րդ եռամսյակում կատարված՝ ՀՋ-ԳՀ-ԱՊՁԲ/1-ԲՊ-03/16.03.21-ԱՄ, ՀՋ-ԳՀ-ԱՊՁԲ/3-ԴՎ-03/16.03.21-ԱՄ, ՀՋ-ԳՀ-ԿՍ-04-1/26.03.21-ԱՄ, ՀՋ-ԳՀ-ԾԹ-04-3/26.03.21-ԱՄ ծածկագրերով «Բենզին Պրեմիում, 8000լ», «Դիզելային վառելիք, 4000լ», «Կաուստիկ սոդա (տեխնիկական կծու նատրիում, ԳՈՍՏ 2263-79) 90 տոննա 100% կոնցենտրացիայի հաշվարկով», «Ծծմբական թթու (տեխնիկական, ԳՈՍՏ 2184-74) 88 տոննա 100% կոնցենտրացիայի հաշվարկով» գործարքների մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ՝

   ա. մրցույթների կազմակերպման մասին հայտարարությունները Ընկերության պաշտոնական կայքում և «Գնումների մասին» օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով գործող ինտերնետային կայքում անգլերենով հրապարակված չեն,

   բ. նախքան գործարքների համար մրցույթ հայտարարելը Ընկերությունը շուկան չի ուսումնասիրել,

2) մոնիթորինգի արդյունքում կազմված վերլուծական տեղեկանքները ներկայացվել են Ընկերության կարծիքին, որի շրջանակում վերջինս 2021 թվականի նոյեմբերի 18-ի №172 գրությամբ հայտնել է, որ հայտարարությունները կայքերում անգլերենով չեն հրապարակվել մասնագետ

չունենալու պատճառով, իսկ որպես շուկայի ուսումնասիրություն հիմք են ընդունվել բանավոր հարցումները,

3) Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի №273Ա որոշմամբ սահմանված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջների հնարավոր խախտումների փաստի ուսումնասիրության նպատակով 2022 թվականի մարտի 3-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի մարտի 3-ի №ԳԲ/34.3-Մ4-3/678-2022 գրությամբ,

4) Ընկերության կողմից 3-րդ եռամսյակում իրականացված ՀՋ-ԳՀ-ԱՊՁԲ/1-ԲՊ-09/23.06.21-ԱՄ, ՀՋ-ԳՀ-ԱՊՁԲ/4-ԻՅ-09/23.06.21-ԱՄ և ԳՀ-ԱՊՁԲ/2-ՍԳ-09/23.06.21-ԱՄ, «Բենզին Պրեմիում, 7000լ», «Ինդուստրիալ յուղ Ի-50 տեսակի, 410լ» և «Սեղմած բն. գազ, 2500կգ» ծածկագրերով գործարքների մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ.

ա. մրցույթների կազմակերպման մասին հայտարարությունները Ընկերության պաշտոնական կայքում և «Գնումների մասին» օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով գործող ինտերնետային կայքում անգլերենով հրապարակված չեն,

բ. նախքան ՀՋ-ԳՀ-ԱՊՁԲ/1-ԲՊ-09/23.06.21-ԱՄ և ԳՀ-ԱՊՁԲ/2-ՍԳ-09/23.06.21-ԱՄ ծածկագրերով գործարքների համար մրցույթ հայտարարելը Ընկերությունը չի ուսումնասիրել շուկան,

5) մոնիթորինգի արդյունքում կազմված վերլուծական տեղեկանքները ներկայացվել են Ընկերության կարծիքին, որի շրջանակում վերջինս 2022 թվականի փետրվարի 24-ի №61 գրությամբ ներկայացրել է 2-րդ և 3-րդ եռամսյակներում իրականացրած գնումների շուկայի ուսումնասիրությունները,

6) Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի №273Ա որոշմամբ սահմանված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջների հնարավոր խախտումների փաստի ուսումնասիրության նպատակով 2022 ապրիլի 26-ից Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ: Նշված և 2022 թվականի մարտի 3-ից Ընկերության նկատմամբ հարուցված վարույթների ավելի արագ ու արդյունավետ լուծումն ապահովելու համար դրանք միացվել են, ինչի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 ապրիլի 26-ի №ԳԲ/34.3-Մ4-3/1302-2022 գրությամբ,

7) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2022 թվականի մարտի 7-ի №69, ապրիլի 12-ի №104 և մայիսի 6-ի №129 գրություններով ներկայացրել է 2-րդ և 3-րդ եռամսյակների գործարքների մասով շուկայի ուսումնասիրությունները և հայտնել, որ աշխատանքներ են տարվում Ընկերության ներքին գործընթացներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար,
8) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի №273Ա որոշմամբ սահմանված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջների 33-րդ կետի պահանջը՝ իր պաշտոնական կայքում և «Գնումների մասին» օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով գործող ինտերնետային կայքում 2021 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակում իր գնումների կազմակերպման մասին փաստաթղթերը անգլերենով չհրապարակելով,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը ՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի №273Ա որոշմամբ սահմանված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջների 33-րդ կետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հունիսի 2022թ.